

ՄԱՍԿԱԽԱՆԱ

ԳԱԽԱՌԱՑԻՆԵՐՈՒ ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵԱԸ

Ա. ՏԱՐԻ

30 ՅՈՒՆԻՍ 1912

ԹԻԻ 17, 18

Խմբագրող

Մ. ԻՓԷՔԱՆԻ

Արտատպ

Զ. ԹԱՊԻՍԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿԻԹԻՒՆ

Ուր կը գիտնեն (տպ.)

Բախարկեալին (Բան.)

Մեք գաւ. մեռածն. հառեակ տղայներ

Յերոսղիմ (Բան.)

Ա. խառնի յեղաթիւական մեծ շարժումներ

Բաւարաց. դեր. հաղթականութեան մեջ

Արեւիկի սակ յաղթանակ (Բան.)

Չափ յեղաթիւականներ

Կրակեան գործը խաղաղիկ Հեռիկի մեջ

Գաւառացին եւ տեղական լուրեր

Գ. ԱԹԵՆՆԱՆ

Յ. ՓԱՓԱԶՆԱՆ

ԱՐՄԵՆ. ՄԱՆԿՈՒՆԻ

Յ. ԳՄԻԹՆԱՆ

Թ. ԺԱՄԿՈԶՆԱՆ

Գ. Ս. ՍԱԴԳԻՍՆԱՆ

Յ. Յ. ՔԻՐԻՇԱՆՆԱՆ

Յ. ԳՄԻԹՆԱՆ

Յ. Մ. ՆԱՐՏԸՄ

Ա. Մ. Ա. Ս. Ս.

Տպագ. ՅՈՎԱՆՆԵԱՆԻ եւ ՆԱՐՏԸՄՆԱՆ

«ԱՄԱՍԻԱ» ՀԱՍՑԷՆ

آماسیة ده «آماسیة» غزوة سی مدیریته

Խմբագրություն «ԱՄԱՍԻԱ» Կիսառնայ հանդեսի - Ամասիա
Rédaction de la Revue «AMASSIA», a Amassia (Turquie d'Asie)

ԱՄԱՍԻԱ

Կը հրատարակուի ամէն ամսու 1ին եւ 15ին, թուրքերէն եւ հայերէն բաժիններով: Թուրքերէն բաժինը մօտաւորապէս 4 էջ, իսկ հայերէնը 12 էջ. երկու բաժինը միասին մօտ 16 էջ պիտի ըլլայ: Բաժանորդներուն տարեկան 24 թիւ պիտի տրուի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թուրքիոյ տարեկան 1 մեհիս և Արսասանեան տարեկան 5 ֆր.
» վեցամսեայ 0.50 » » վեցամսեայ 2.50 »

Բաժնիկնը յայտարարուի իր իրաւունքով: Իրաւոցումներու համար տնային կաշառարար պաշտօններ կը տրուին:

Տոսը օրինակ «Ամասիա» ազատողին մէկ օրինակ նուր:

«ԵՐԳԵՅԻ»

ՀԵՂԻԱԿ ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ

Գոյսրիկ իմաստեղծական հասար մը 288 էջերի թողկացեալ: Իմաստը եւ հաճեալի ճշգրտութեամբ ուր պիտի գտնեմք պատմականական վառ երևալիքներու սիրուն եւ յայտնի կտորներ:

Կը յանձնարարենք հասարակութեան. տարածքը համար պէտք է դիմեն ինքն ինքն Արեւմտեան Հայաստանի,

Իսկ Թուրքիոյ համար 10 դահեկան

Եւրոպայի » 2 Ժամկէտ

Ռուսիայի » 90 Կողմէ

ԽԱՄԱԽԱՆ

ԳԱՒԱՌԱՑԻՆԵՐՈՒ
ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍԸ

Ա. ՏԱՐԻ

30 ՅՈՒՆԻՍ 1912

ԹԻԻ 17, 18

Խմբագրական

Ո՞ՒՐ ԿԸ ԴԻՄԵՆՔ

Երբ հարկ ըլլաւ հարցնել մեր Ազգային ու Պետական ղեկավարներուն ու մարմիններուն թէ ո՞ւր կը դիմէք դուք և ո՞ւր կ'առաջնորդէք ձեր 'եռունը կեցած բանուոր, աշխատաւոր ու տառապող ժողովուրդն, որ դարեւոր ընթացքին տիրապետողներու ճնշումներուն տակ ստրկացած ու բաւախ հագիով համակուած, լուռ ու համակերպող, կը տարուի ձեր գոյց տուած ու ղիէն վատահ ենք թէ անոնք պիտի լռեն ու տատամսին, քանի որ անոնք հասարակագիտական ու ընկերային հասկացողութենէ իսպառ հեռի, ժողովուրդը կ'առաջնորդեն, օրուան պարագաներու, դիպումներու, անհատական շահերու ազդեցութիւններէ մզուած ու թեւադրուած: Անոնք և ո՛չ մէկ ատեն աշտադրող ու տառապող ժողովրդեան շահերով կը հետաքրքրուին, այլ միշտ ախրող դատաւիպին կողքին կեցած կը պաշարտացեն ինքզինքնին և իրենց պատկանած դատակարգը, միշտ ի՛նչուս տիրուպին ու սկարին:

Քննե՛նք և տեսնենք. —

Մտնե՛նք, բուն իսկ ժողովրդեան ձայներու ներկայացուցիչին՝ բարլամենթին սեմէն ներս, ուհա՛, հո՛ն պիտի տեսնենք մարդեր, որոնք ո՛չ միայն երկրին պէտքերուն անտեղեակ են, այլ նաև իրենց ընտրուած չըջանակին պահանջներն ու պէտքերը գիտնալու չափ հմտութիւն ու պաշար չունին:

Անոնք ոչ միայն հասարակագիտութենէ, պատմութենէ, ու ընկերային հասկացողութենէ զուրկ են, այլ նաեւ իբր քաղաքացի՝ իրենց ունենալիք ստորաշին կան իրաւունքներէն անտեղեակ են:

Օրակարգի խնդիրներ կուգան սեղանի վրայ՝ կը խօսուին, կը վիճուին, կը քննուին, կը քուէարկուին ու գործադրութեան կը դրուին, բայց ի՞նչու որո՞ւ.— Միշտ զիրենք ընարող ժողովրդեան.— բայց հոգ չէ ատիկա, հերիք է որ տիրող դասակարգին չահերը յաւերժանան: Որինակներ պակաս չեն. ինչպէս՝ համախմբումներու, հուպքումներու և թերեւ Վազնի վազն ալ մամուլի օրինակները: Սահմանադրական երկրի մը մէջ երբ ժողովուրդին միջոյններ պէտք է արուի, հասարակութեան, խօսելու, վիճելու, բողոքելու և պահանջելու, ընդհակառակը կը կաշկաւ գտին այդ զարգացուցիչ ազդակները: Նոյնն է պետական որ չլինակին մէջ ալ մանեա. յանուն ժողովրդի, յանուն սառնաւորի կը խօսուին, բայց քայլ մ'իսկ չառնուիր դէպի այդ. այսպէս է եղեր պատմութեան ընթացքը բոլոր երկիրներու մէջ, ոչ այլէս պիտի ըլլայ և հոս:

Մտնենք ազգային յարկերու սեմէն ներս. ազգային մարմիններու նախագահը նստած է ակօռին վրայ, հոգ չէ թէ անարժան այդ ակօռին. կը վճռէ, կ'որոշէ, կը հրամայէ, կ'ապառնայ, իր գործին եկած ատեն «ըստ սահմանադրութեան» կը գլտորէ, հակառակ պարագային «սահմանադրութեան անթույլատու դռնակը» կը յայտնէ և վերջապէս ազգային կրօնական, կրթական, տնտեսական մեքենան միահեծանորէն կը դարցնէ ու կը դարցնէ, բայց ի՞նչ կ'արտագրէ.— ոչինչ — միայն և միայն իր և իր ինքին չահերն ու դիրքերը կ'ապահովէ, հոգ չէ թէ ազգային ու ժողովրդական չահերը կը ստահարուին, կրթական ու կրօնական գործերը կը սուտեն ելեր: Բայց ո՞վ է պատասխանատուն, — դո՞ւ, ինքդ ո՞վ ժողովուրդ, որ ստրկացած համակերպութենէն դուրս ելլելով չես հարցներ քու զեկաւարներուդ թէ՞ ո՞ւր կը դիմէք դուք և ո՞ւր կ'առաջնորդէք մեզի . . . :

Այո՛, ո՞վ տիրուող ու իրաւագուրկ ժողովուրդ. մինչև որ չի գիտակցի, մինչև որ չի վարժնիս, չի կողմակերպուիս ու ամէն տրէք ձայնով լրսելի ընել չի փորձես ու միահեծանութեան իրաւունքդ չի պաշտպանես, տակաւին երկար ժամանակ պիտի իշխեն վրագ, պիտի ծծեն արիւնդ, պիտի շահագործեն քու կին անտարբերութիւնդ, բոլոր շրջանակներու մէջ ալ: Գիտակցի՛ր, ու պայքարի՛ր և գիտցի՛ր թէ՞ ո՞ւր կը դիմեն զեկաւարներդ և ո՞ւր կը դիմես դուն:

ԲԱՆՏԱՐԿԵԱԼԻՆ

Մօրմուրայրիս՝ Յ. Ս. ին

Քովդ էի... մահասարսուռ բանսիդ մեջ,
Ասպնջական խոկումներու վա՛յր լռին,
Ուր փողփողուն՝ լոյս հոգիներ վառ անեւք,
Հիւժած հալած են կարօտով սենդագին
Քովդդ էի... դուն սխրագին դալկահար
Կը հեւայիր ցաւերուդ մեջ անդադար:

Ասպնջական խոկումներու վայր լռին,
Շուրջդ մտերիմ ունեիր բեզ լոկ շղթան
'Խառն ցաւեր լրկեր էին սիրտդ արի՝
Ու մահասուէր, մռայլ կեանքդ բանական
Սրակներուդ մեջ ներմուծեր էր վայրի
Ընձանցներու բոլոր կեանքը անհնարին...:

Ու փողփողուն՝ լոյս հոգիներ վառ անեւք
Յար կարասուէն իրենց արժին ցաւն անհուն
Համապարփակ լուսեան վր զոգին մեջ.
Պաշտամունքի զգացումովն իմ հոգւոյն
'Բեզի՛ եկայ ես ալ անոնց հետ բոլոր,
Որովն ճակտիդ կուտան սեւ գիրն ա՛հ այսօր...:

Հիւժած՝ հալած են կարօտով սենդագին
Ամենուն հետ եւ սիրտդ ալ է ցաւագին,
Հեշագրգրո՝ սօզնապիդ մեջ թախծագին
Յաւերժօրէն՝ սուրբ պատած եւ ճակտին,
Կ'սպասե՛ս դեռ... սեւ փոքրով ցրագին
Մինչ հոգւոյդ մեջ վե՛տի հերձեր կը բացուին:

Քովդդ էի... դուն սխրագին դալկահար
Կ'աղօթէիր աչիդ անհուն սեւեռած,
Յոյս կար, եւ լոյս բիբերուդ ծայրն անձկայի
Կը շնչէր մեջդ լուռ բողոքի մեկ Ասուած,
Ու կ'արձակէր իղձն իր ծիրը բերկրայի
Ազատութեան ճառագայթող լոյսէն յար

Կը հեւայիր ցաւերուդ մեջ անդադար
Ասպնջական խոկումներով մը լռին,
Ու փողփողուն՝ լոյս հոգիեդ վառ անեւք
Հիւժած՝ հալած կարօտի սեղ սենդագին
Ձայնդ միայն կ'արձագանգէր սիրավառ
«Կեանքս հո՛ն, սերքս հո՛ն է .. ցեղիս մեջ...»

Դասքնունի

ՅԱՐՈՒԹԻՒՆ Պ. ՓԱՓԱՋԵԱՆ
ԱՐԻ-ԱՐԱՆՑ

ՄԵՐ ԳԱԽԱՌՆԵՐՈՒՆ ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ՔԱՌԵԱԿ ԱԶԴԱԿՆԵՐԸ

(ԱՐՇԵՍՏ ԵՒ ԳԵՂԱՐՈՒՆԵՍ)

VI

Մեր հայրենիքը դանդաղան ազգութիւններու պատմական պայթեցողութիւնն է՝ անոր հոս գտնաւորուելու այլ շտեմարանը ըլլալուն համար, աշխատանքի՝ —արհեստի և գեղարուեստի — փառաւոր հոգ ունի։

Արհեստը, որ մաքին աւարական աշխատութեամբ և ֆիզիքականին զօրաւոր օժանդակութեամբ՝ պէտքեր գոհացնող առարկաներ ու գործիքներ արտադրելու գրութիւնն է, մեր գաւառներէն ներս, զիս իր վրայ նախապետականութեան նշանաւոր գրածը կը կրէ։ Մինչդեռ արհեստագործի նման, այլ իր երիտասարդական ստույգ ուղիւն կը քայլէ՝ դէպ առաջ, ժամանակին նոտ շարունակ նորոգուելով։

Գաղով պեղարուեստին, որուն համար խիղճն կ'ըսէ՝ մէթոտի մը համաձայն բան մը չիսն ու ելանալն է՝ և ժիւղէն տալ՝ մանուշակ, ան՝ տեսականին գործնականի վերածուած ճարտարութիւնն է՝ կը պահանջէ մաքին չափազանց յոգնութիւնը, ֆիզիքականին պղտկ օժանդակութեամբ և իր արտադրածին մէջ կ'ուզէ թօփել և թաղանջ խորհուրդներ որ կարենան զինք զիտողին մէջ առաջ բերել՝ զգայում, խել, կիրք, հիացում, վերացում, պարզ խօսքով՝ հոգեկան աշխարհին մէջ, յեղաշրջում։

Այս երկու ճիւղերուն մէջ ալ, մենք յետամնաց դիրք մ'ունինք, անցեալին նուազանց ցնցոտիները մեր վրայէն չ'ձգելով։ Որ պարզաւիշ մասնատ, ստատակական գրաւատիքներ պիտի լսես՝ իր առօրեայ գրաւման նիւտմամբ։ Որ բանաստեղծն ինչ յանկառ, նէ անցեալը կը քրքրէ,

(Շարունակորիւ ետևորդ քիւնտն և վերջ)

սուրճարու ու սրբաւհրներու չրջանը կը փոխադրուի և երբեմն ալ անկէջ անդին պնդելով կը մանէ գիցական քառար իր արհեստին ծագումը մինչև հոս տանելով։ Այս հասկացողութիւնները զեռ տեղ են բռնած ժամանակակից սերունդին ուղիւն մէջ, հետո զյատակուն սկզբունքներէ և նիւթադաշտաւան (Materialism) հիմունքներէ։ Այս, որոշապէս մեզ ցուց կուտայ թէ, ժամանակակից դրական հասկացողութիւններէ սրբան բարոյութիւնը անկին կը գտնուի։

Արհեստի և գեղարուեստի ճիւղերուն մէջ՝ քաղաքակիրթ երկիրներէս մեր եւ մնալուն բուն իսկ պատճառը հոս պէտքէ փնտել։ Էնք ունեցած դրականութեան հպատակուն ուղին ու աննկուն կամքն ու նախաձեռնութիւնը մեր մէջ։ Մեր բոլոր գործերուն մէջ տեսականութիւնը իր լուրջարժակ տեղն ունի բռնած և արեւելակապութիւնը այլ օրէն իր խորխոր ձրգած։ Մենք անյապին խանձարուրին մէջ յճալած ոգով մը լենք ուզած յառաւիժել, սամաններ կտրել, ևզածովը չրաւականանայ վաղուանը Ենովային բարի անօրինութեանը չ'թողելով, այլ կրոնական գծու խախտելով առաջնորդուելով ատելութեան հրէշք թաղարկեցուցած ենք այս երկրին մէջ, և սկսած ենք զազանանալ զիրար բամբասելով, յօշոտելով և մեռելութիւն բուրելով, ծնուող տուրով աշուղտ ներքին և արտաքին նորոգ կռիւներու օրոնք ևս ոչ նուազ լուրջ պատճառներ են մեր արհեստներուն և գեղարուեստներուն յետամնացութեամբ։

որոնց վրայ եւս պէտք է կարգու գէթ համառօտակի անդրադառնալ:

Ա. Դաւանային խնիւր.— Կրօնական մութեանդ զգացումը, ասիական ազգերու պատմութեան մէջ աւելի զրգուռն վիճակ մը ստատու, քան այլ երկիրներու ազգութեանց: Հոս, մեր երկիրը կենդանի վիճակ է տառա: Այն ատեն, երբ արշնտան ու գեղարուեստը արեւելքէն արեւմուտք չուկցին, այս վերջինին կողմէ անոնք տաք լինելու յաւանքն արժանաւորան: Եւ անոնց ծագման ու կրօնի խորութեան: Մինչդեռ յաճախ Ասիան, որ Եւրոպայի առաջինը բառելու պատիւը պէտք էր տնկնար, իր գաւառային նեղ մտածելակերպով առեւ յայն՝ որ իր ստիճանին ցանցէն անդին տարրը բնակչութեան կողքուր և ուղեւ որ անոր աշակերտը եղաւ: Այս հակաբնական երևոյթները և մեր Հայրենիքի թաղանթին վրայ, հակառակ որ նո՛ւ Եւրոպայի մօտիկն ալ ապրելու բախան անեցիր էր:

Նորածնութիւնը որ կողքուր քաղաքակրթ Ներուպայէն, մեր գաւառներուն մէջ թուով ու քանակով բոլոր Մամուտակաւնէն աչքին արդարացիութիւն համարուեցաւ: Ժամանակ մը: Նահապետականութեան անշուք տարազէն չ'եւանդո՛ւ, սո էր ասիոյ ազգին եկող նշոք պատգամը: Եւրոպականացողը մահացու մեղաց արժանի պէտք էր համարուէր, որովհետեւ փորձանքները տառնցիկ կը յառաջանային և վերն Աստուած կը նեղանար: Տէվրիշական տարազը ամենուրէք պէտք էր թագաւորէր յայլթական, աշխարհ շատ րան կար... Իրականութեան այս և զեռնական ցանցէն ազատելու համար, պէտք էր հետանալ այս երկրէն: Ուրիշ կերպ կարելի չէր: Միևնոյն ատեն Քրիստոնէի ու Իսլամի միջև բացուող առեւտրութեան այս անշրպետը, իրարու տարազն ալ կրելու չէր ներքը: Այս այս տա-

րօրինակ հակառակութիւններուն մէջ, ուր գործելու ճիգ չ'իյալ, կաշ լեփեցուն՝ տրեկութիւն, քաճաճութիւն, ստրկութիւն, տիրապետութիւն, բարբարի կիրքերու յագեցում, բնկալէս արշնտար պիտի յաւաքար և գեղարուեստը վարդանար: Ո՛չ, հազար անգամ ո՛չ, Պէտք էր Եւրոպան յառաջդնէր, որուն համար Աստուած և Արարի հոմանիշ բառեր էն: Իր տքնաջան աշխատութեան չնորձ ան պէտք էր իր երբեմնի ուսուցչին ուսուցչը դառնար, որովհետեւ կրօնը իր աշխատութեան մէջ գործ չ'ունէր:

Բ. Պատկերներ.— Աշխարհամասնոթ է մեր գաւառներուն մէջ թաղանթ արքանները, որոնց ծագման պատճառները փնտաւել՝ մեզ մեր նպատակէն հեռու պիտի տանէր: Ասորական չրջանէն տնկելով մին և մեր օրերը եղած տիրապետութիւնները — Հոսովմէական, Հայկական, Յուսական, Պարսկական, Արաքսական, Տաճկական — ամբողջ արիւնով կոտորուեցան: Հասարակութիւնը իր օրստան քղբողումը և գայն վարդախելու միջոյն լուծն վրայ խորհել թանկ մտածողութիւններ ունէր — ան վաղուան ինքնապաշտ գանութեան հոգն էր: Եւ արաւաւթիւններն ու թաղանթ կը քաղաքներէն: Աշխատաւոր հասարակութեան ինքքերը վարկեանի մը մէջ բարբարի կրքերու յագեցումին համար օղը կը ցողէր՝ դժխտային բոյնքու լափկեղումէն և կամ բրանապետներու սրկրէն զէպի պատմութիւնը: Այս, նրէշային գործերը որոնք կը պայթէին ասիոյ պայմաններուն նազանդութեան սր հոմանիշ էր ստրկութեան, չ'համակերպողներուն գլխին, ոչ նուազ պայծախօս պատճառներ են արշնտարն ու գեղարուեստին յառաջիմութեանը: Համալրանք և հազարակցութիւն պէտք էր երկու աշխարհներուն մէջ և այդ անգահալուիչ էր մեր երկրի վար-

գաղման բոլոր պայմաններուն մէջ:

Եթէ, այսքան մ'ալ գէթ արհեստն ու գեղարուեստ, բոլորնք արտադրողութիւնն են զիրենք ստեղծող ազգութեանց հոգեկան նկարագրի կարողութեանց, կրցած են թուչք մ'առնել մեր գաւառներէն ներս, այդ՝ արդէնք պէտք է համարել այն հազորդակցութիւններուն զոր կատարած են մեր նախնիք Արեւմուտքէն հետ: Ծիշտ է որ ներկայիս ալ կր կատարենք այդ հազորդակցութիւնները քաղաքակիրթ այդ աշխարհին հետ, կամաւորապէս՝ ուրովհետեւ պիտի ապրինք, ակամայօրէն՝ ուրովհետեւ անտեսապէս գերբայցած ենք աւանդ, և սակայն արեւելական մատածուներէ և զգաղութներէ, դատողութենէ և գիւտնադիտութենէ ոչ ձերբազատ: Արեւելականութեան այդ ոգին երբեմն մեր մէջ մարմնաւորուելով կր սանի բնագաւաղիկ առասպելներու ոգային զգեակները, ի այս դարուն ալ, ամէն ինչ անարգ չուցնելով, անպէտ համարել տալով, աւանդ գիտնալու որ ժամանակի անդառն գետի մը նման կը սահի, կ'երթայ և մենք անկէջ չենք ռգաուիր:

Սակայն ինչպէ՞ս պիտի դարձանք մեր արհեստներն ու գեղարուեստը և մենք պիտի գնանք դէպի վերածնութիւն — Ահա հարցը:

Զարգանալու և վերածնուելու համար պայման է պետութեան կողմէ չինարար քաղաքականութիւնը՝ հետապնդուիլը և ժողովուրդին կողմէ իր քթին վրայէն ազգայնական ակնայնները վերցուիլը: Ժողովուրդը և պետութիւնն ձեռք ձեռքի և սրտ սրտի ստամ գէպի ժողովրդայնականութիւն (ԼԵՄՈՒՐԱԿ) քայլն ալ աւագ պայման մ'է: — Ահա այդ ասան արհեստ և գիղարուեստ պիտի սկսին ծաղկիլ:

Պայման է նաև մեր երկրէն, իւրաքանչիւր գաւառի քաղաքներու իւրաքանչիւր արհեստի կամ գեղարուեստի մասին յեղաշրջում մը յառաջ բերելու

համար, զորն ապնուանելու համար, կազմել զրամական ֆոնդեր՝ որոնց սուկոսով կարելի լլլայ բնականակ երիտաւարդներ և աւանքի ուղարկել իւրաքանչիւն լուսաւոր կեդրոններ, պատրաստուելու համար արհեստագէտներ և գեղարուեստագէտներ, որոնց սովոր կը քաջէ մեր հայրենիքը: Այս առթիւ, չենք կրնար աչքաթուղ ընել, իրենց հայրենի օճախները տարիներէ ի՞ վեր լքողներն ու օտար հորիզոններու տակ պանդխտացնելը, որոնց մէջ կան անհասներ, որոնք արուեստագէտի ու մանագէտի համբաւը չինած են այսօր, բայց զեռ կ'սպասեն հոն ու կ'ուզեն իրենց աչքերը փակել այդ հեռաւոր յամաքներուն վրայ, մեր երկրին ներքին ու արտաքին աշխոյժ վաճակին հետեւաքովը տ'ուշտ, որոնք մեզ սնչապնոց Դամակեան տարր պիտի կուսեն օր մը՝ մեն գլխուն վիրի:

Քաղաքակրթութեան կենտրոնը ջրդր կը կազմեն արհեստն ու գեղարուեստը: Զանաւոր զարգայնել, կը նշանակէ կենդանութեան շունչ վիշել Արեւելքի Հիւանդին և անոր երակին մէջ մաքուր արխն ներարկել:

Պետութիւնը իր բոլոր միջոց երով և ժողովուրդը իր բոլոր կարողութեամբ մեր գաւառներու այդ հսկայ պահապան նկատմամբ պէտք է մտածեն: Արեւելականութեան ստոր ու թունաւորիչ և մահացուցիչ խորհուրդներ մէկդի թողած, իջած ցնորքներու սաւառնակներէն դէպի բնականը, պէտք է հետեւիլ խաղաղ աշխատութեան՝ ծնունդ տալով նորանոր գիւտերու և նորարարութեան:

Իջնել բնութեան պարզ, այդ մեծ ուսուցչին մօտենալ որ իր ամբողջութեամբն արհեստ և արուեստ է, այդ պէտք է լլլայ մեր գաւառացիներուն մեծ բռնալը: (*)

ԱՐՄԵՆ ՄԱՆԿՈՒՆԻ

(*) Այս ելուքին նկատմամբ կ'ուզեի ուրիշներու կարծիքներն ալ լսել «Ամապիա»ի էջերուն մէջ:

ՔԵՐԹՈՂԻՆ

Նուէր բարեկամիս՝ ՄԻՀՐԱՆ ԲՐՈՒՑՆԱՆԻ

Բիւր սիրողի կամայական լուծին տակ,
 Հե՛ք տառապած մարդկութեան,
 Երբ նրբամարտ երբո՛ղ, վիշտը անպարփակ,
 Տրայտանքը անսահման.

Յանուն ամեն սրբութեանց երբ որ տեսնես
 Նիւթուիլն անլուր դաւերու .

Շահագործուիլն հե՛ք խեղճերուն աղեկեզ,
 Իրեաններէն տրնաբոլ:

Նքէ հոգիդ փրօտադուի տեսնելով,
 Լքուած, քրօտառ բանորին,
 Դեղնած մորթին վայրագ երծումն անգորով,
 Մահացումը ողբադին,

Երբ վերջապէս ըզգաս երբո՛ղ, զուն մեկ օր,
 Թե՛ չարանենց ուժ մը վատ.

Կեղեքումով կը վարձատրէ բրնձաբոլ,
 Աւխտատուին անվիաս,

Մարդուան

Չըլլայ ըսես չ'արժեք երբեք որ ապրինք,
 Երբ կան սիրող, սիրուողներ.

Կեանքը սին է երբ շահամոլ բիւր մարդիկ,
 Խեղճը գործիք են լրեր:

Չ'ըլլայ ըսես պահ մը կեանքէն ձանձրացած
 Չը՛ ծնէինք երանի .

Քանի զտուած, ծեր բանուորին ո՛վ Աստուած
 Աչքէն արցունք կը կաթի:

Մի՛ լար երբո՛ղ, մի լացցներ խեղճն յաւէս
 Լացն ընդվրձումը կ'ընկնէ

Արիացի՛ր, արիացուր զայն եզ հե՛ս,
 Մեր ապագան անյոյս չէ:

Մի՛ լացրներ, այլ պայտարիլ սորվեցուր՝
 Փրկութեան այդ է ուշին .

Կազմակերպուած պայտարով մը վէս ու կուռ
 Պիտի հասնինք մեծ օրին:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԳՄԵԼԹԵԱՆ

Պատմական

Աւիստարիի Յեղափոխական Մեծ Շարժումները

Ա.

ԱՆԳՂԻԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

«Ազատութիւնը անօրէն բռնապետներու կը
 պարսիկէ»: Lieber

Որոշումը գործադրուեցաւ:

Բրայտ անտնով պաշտօնեայ մը կայ.
 Նեշտուդին խորհրդարանին զուռը, վարն-
 տկու կամ ձերբակալելու համար ամէն
 անանք՝ որ բանակին անհաճոյ էին. ա-
 տանելով 143 անդամներ զրկուեցան իրենց
 երեւոյթութեան անօրէններէն, ու ներքը

մնացին միայն 30 ներխաչուցիչներ,
 հասարակայ ժողովը կազմող: Այս խիստ
 կարգադրութիւնը պաշտօնէին անունով
 կոչուեցաւ «Բրայտի մաքրագործում»
 (Pride's Purge)

Այս այսպէս բարդամենդի փոքրամաս-
 նութիւնը մեծամասնութեան վերածուե-

լով՝ անսխիճապես որոշուեցաւ թագաւորը
դատի ենթարկել իրր՝ զրուժան։ Գրում
վելի ձեռքով 135 անդամներէ արդարու-
թեան յարձրագոյն տտեան մը կազմուե-
ցաւ, ու Կարդուս ատենդ առջե կանչուե-
ցաւ։ Ասիկայ տեսանին առջե կրկնով
հարարորէն մերժեց աւար իշխանութիւնը,
յարտարարելով որ մէկ երկրային տու-
եան իրաւունք ունի զինք դատելու,
հարցաքննելու։ Ատեանը սակայն իր
գործը չարունակեց անվարան, և շաբ-
թուան մը ընթացքին մէջ՝ մահուան քրա-
տըմնելի վճիռն արձակուեցաւ։ Կարդուս
այլեւ մահուան դատապարտուած էր «իրը
բռնակալ, մասնիչ, ոճրագործ և սահմա-
նադրութեան ու ազգին ազատութեան
դաւաճանող թշնամի»։ Այս յախուռն
վճիռն զէմ թագաւորը գորեղապէս բու-
զոքեց, բայց իզուր. ո՛ր իր ձայնը լսող,
զինքը՝ մտիկ ընող չէր մնացած։

Մահուան վճիռը պարծաղուեցաւ։ (*)

Կարդուս կառափնատուն առջե ներկա-
յացաւ կատարեալ հանդարտութեամբ ու
նշանակալից արժանապատուութեամբ. ու
երբ գլուխը կառափնատին վրայ պիտի
դնէր, հոն բացարձակ անկեղծութեամբ
հետեւեալ յատկանշական խառերը արտա-
սանեց. «Ես ճշմարտօրէն ժողովուրդին
ազատութեան ցանկացող մըն եմ ախ՛շափ
որչափ ուրիշ ունէ մէկը. բայց պարտւիմ
ձեզ ըսել որ իրենց ազատութիւնը կը
կայանայ կառավարութիւն ունենալուն
մէջ, ո՛չ թէ կառավարութեան մէջ՝ իրենց
բաժին ունենալուն մէջ»։

Ա՛յ Կարդուս գլխատուած էր (1649,
Յունվար 30ին), և բռնակալութեան սս-
կեզօծ արձանը՝ մրանգամ ընդ միշտ փը-
շըրուած։

(*) Սկզբն առգեօք բուրբ յեղափոխական-
ներ լաւ չկարգացին պատմաբան այս օրի-
նակիէի էջը, գազան Համբարդատաւորած
առնեցին։ Բայց ո՛վ ըսաւ թէ բուրբն՝ Սեգ-
ղիացիներու չափ առնական են...:

Դիմադրման այս պատմական օրէն քանի
մը շարաթ ետք՝ ժողովուրդին բոլոր ներ-
կայացուցիչները իրենց քաւենեքով որոշե-
ցին ջնջել թագաւորի պաշտօնը իրը «տն-
պէտ, ու զօնդակ բան մը. և վտանգաւոր
ժողովուրդին ազատութեան, ապահովու-
թեան, ու նորային շահերուն»։ Նոյնու-
րինակ պատճառարանութեամբ ջնջելով
նաեւ լորանքու ժողովը, հաստատեցին ա-
ւելի ազատ դրութիւն մը «հասարակապե-
տութիւն» (The Commonwealth) անունին
տակ, Երկրին գործադիր իշխանութիւնը
յանձնուեցաւ Պետական Խորհուրդի մը,
որու գլխաւոր առաջնորդն էր Սըր Հէնրի
Վէյն. այս մարդն էր որ կառավարութեան
զէկը իր ձեռքն ունեցաւ մինչեւ Գրովեյլը
կոնստակալութեան (protectorate) հաստա-
տումը։

Նորակազմ հասարակապետութիւնը սա-
կայն կոչուած էր կուրծք տալու շատ մը
դժուարութեաներու. որոնք բնականօրէն
երեւան պիտի գային իրեն առջե, քանի
որ դա ծնունդն էր եղած քաղաքական
ու կրօնական խառն համաքննիւր։ Կա-
րդուսի գլխատումը արդէն եւրոպայի բու-
լոր վեհապետները վրդոված ու տհաքե-
կած էր։ Փռանաւ, Ռուսիոյ և Հոլանտա
բայրովին մերժած էին Հասարակապե-
տութեան դեռպաններուն հետ ունէ հա-
ղարդակցութեան մասնի։ Մինչդեռ առ-
դին Սկովտոպիները շատ ուշ զղջացած
լլլուով իրենց վեհապետը թշնամիներու
ձեռքը յանձնած ըլլալնուն, այժմ կը
փութան իրենց անհաւատարմութեան
արտաք սրբելու, անոր որդին իրենց
թագաւոր հռչակելով՝ Կարդուս Բ. ան-
ուամբ. Իրլանտայի կայսերականներն ալ
նոյնը հաստատեցին. նոյնչափ, բուն Անգ-
լիոյ մէջ գանառլ թագաւորն կուսա-
կիցները տենդոտ ու ապառնական գոր-
ծունէութեան մէջ էին։ Այսպէս ահա
նորոժին Հասարակապետութեան սպառ-
նացող վտանգները բազմաթիւ էին թէ

նկառն և թէ դուռէն: Անգղիոյ Սկոտլանդ և Իրլանտայի մէջ յուզումը սրքան ուստրի, նոյնքան և աւելի վրդովիչ էր եւրոպական տէրութիւններուն մէջ: Ըստեպմամբ դրութիւնը ծանր էր, և սակայն անկէ յաղթական դուրս գալու համար ծնած էր արդէն մէկը, — օրուան մարդը՝ Գրամվէլ:

Կարծես հին Հռովմէական հասարակապետութեան նման, Անգլիական հասարակապետութիւնն ալ նոր ուժ ու զօրութիւն կը քաղէր յառաջ եկած բողմապիսի վառնդներէն: Գրամվէլ Իրլանտայի Փոխարքայ (Lord lieutenant) կարգուելով, նոն գրկուեցաւ կաթոլիկ կայսերականները զսղելու համար: Իր «երկաթեայ բռնակով» (Ironsides) Իրլանտա արշաւելով, արագ՝ բայց անխղճօրէն զսղեց հակառակորդները, անխնայ կտաւելով ու ջարդելով քաղաքապետ գինաւորներ ու անմեղներ: Տեսէ՛ք թէ ինչպէս կը նկարագրէ ինք իր վայրագութիւնները. «երբ տեճատուր բլլային, իրենց պաշտօնականներուն գլուխները կը կտրուէին, և գինաւորներուն ալ ամէն մէկ տառնորդը անձր կ'սպաննուէր, մնացեալը զերի վաւրելով դէպի Պլալատը»: Իրլանտայի ներսը հանգէպ Գրամվէլի ցոյց տաւած աւնորակիկ անգլիականները պատմութեան մէջ իր փառաւոր յիշատակը նսեմայնաց սև պատներ դարձած են:

Իրլանտայի Կաթոլիկները այսպէս ծայրայեղօրէն տկարայնելով, Գրամվէլ անոնց հողերն ալ յարքունիս գրաւեց, ու զանոսք լեցուց Անգլիայի ու Սկոտլանդի բողմապիսններով, որոնց գործած աւերներն ու անիրաւութիւնները լայն խրամաւ սր բազած են այն տեղ Կաթոլիկ ու բողմապիսն յարանումութիւններուն միջև մննչև ասօր: 1641 էն մինչև 1652 թուական 10 տարուան մէջ 500000է՝ աւելի մարդիկ սպաննուած են Իրլանտայի մէջ. այնպէս որ բնակչութեան հինգ վե-

ցերորդը ջնջուած է իրրա Անգլիայի ներսը: Այս բոլոր վայրենութիւնները նկարագրող պատմիչը սա յայտարարութեամբ կը խառնէ զառն իրականութիւնը. «մարդ կրնայ ճամբորդել քրտան կամ եռսուն մզմններ անխղճաւ, առանց տեսնելու կենդանի արարած մը»: Այս ամէնը Իրլանտայի ներսը սրտին մէջ տանելու թեւան ու վրէժնորդութեան սուսկալի կրակ մը միայն վառած են դէպի Անգլիայի մաքրակրօնները, և զարհրէ ի վեր զնո վառ մնացած է ալի կրակը, որ թերեւ մարի կամ մեղմանայ իրենց ընդամարական այն ծրագրով, որ հոմերուսը^(*) կը կոչուէ:

Գրամվէլի «նորիւ» բողմապիսններու հաստատուելը Իրլանտայի մէջ, կոչուած է Անգլ. պատմութեան մէջ «Գրամվէլեան գաղթականութիւն»:

Հասարակապետութեան վարիչ մարմնայն կոչվեց Գրամվէլ Իրլանտայէն ետ կանչուելով՝ զրկուեցաւ Սկոտլանդի ներսը, զտանք ևս խոնարհ չեղաւ համար նորոգատաւ կառավարութեան առջև: Գրամվէլ նոն ալ ցոյց տալով քաջամարտիկ զարավորի մը հազուադէպ գործերը, իր առջևէն թշնամի բոլոր բանակները կը զրուշն այնպէս՝ ինչպէս յարգը հովին առջև: Տրնպարի և Վորտեզլըրի երկու ճակատամարտներուն մէջ ամբողջ Սկոտլանդ հպատակեցաւ նոր բէվիմին:

Վերջապէս բանակին ու բողմապիսնին միջև տնտեսաձայնութիւն մը ծագելով, Գրամվէլ վաշտ մը զինուորներով ստիպուեցաւ խորհրդարան կրթալ, ու նոնքանի մը վայրկեան օրուան վիճարանութեան ունկնդրիչէ վերջ՝ ոտները գետնին զարնելով, նախատալից կերպով բացա-

(*) ՀՕՄ-ԻՌԻ-ԼԵ (Home-Rule) Իրլանտայի ներսը ինքնօրէնութիւնն է, որու համար մեծանուն գիւտագէտը Կուսարոն իր կեանքի բոնկկազին մասը մտնեցուց, եւ՝ վերջապէս այս ատի յաշոկեցան ձեռք ձգել զայն:

գանջեց. «ես վերջ պիտի գնեմ Ձեր զբաղմունքի թիւններուն. ա՛յ ձգեցէ՛ք գացէ՛ք, լաւագոյն մարդոց տեղի տուէք: Այլեւ դուք երեսփոխաններ չէք. Աստուած Ձեր պաշտօնը վերցուցած է» Այս խօսքերէն անմիջապէս ետք, նախապէս պատրաստուած զինուորները ժողովարանէն ներս խուժեցով, դուրս ըրին բոլորն ալ, և Գրոմվէլ դուռը կղպելով, բանալիները առաւ ու մեկնեցաւ:

Այսպիսի կարուկ եղանակով ա՛նա լուծուեցաւ այն երկարատեւ բարլամենար, որ 12 տարիներ պաշտօնավարած էր (1640-1652):

Օլիվեր Գրոմվէլ այսքան խրոխտ կերպով լուծելէ վերջ երկարատեւ բարլամենար, անմիջապէս անոր տեղ ինք ընտրել տուաւ իր ուղած մարդիկները, ու կազմեց այն փոքր բարլամենար, որ հագիւ Յամփս կեանք բռնեցաւ, և որուն անդամները, ընդամենը 156, կը բաղկանային կրօնասէր ու բարեպաշտ անձերէ. որոնք իրենց ժամանակին մեծ մասը կ'անցնէին Սուրբ զրական մեկնութիւններով, ազօթքներով ու յորդորներով, այնպէս որ իրենք օրէնսգէտ ու ճշմարիտ երեսփոխաններ ըլլալէ աւելի, Գրոմվէլի չուկամակաւորները եղած էին, առանց ոեւէ ընդգիմադիր տարրի: (*)

Հինգ ամիս ետք, այս ջգագուրկ ժողովը հրաժարելով ամէն բանէ, ինք իր կամքով յանձնեց պետական ամբողջ ղէկը Գրոմվէլի ձեռք, ինչ որ չափ քնակա՛ն էր: Գրոմվէլ զինուորական պաշտօնեաներէ բաղկացած ժողովի մը միջոցով կազմել առաւ սահմանադրական նոր ուղեգիծ մը, որ կոչուեցաւ վարչական

(*) Ներկայիս Օսմ. բարլամենար ալ Երբիւտի ձեռքով ընտրուած ըլլալով, պատմականօրէն պիտի ըլլայ այն ինչ որ եղաւ Գրոմվէլի բարլամենար, Բանի որ առանց ընդդիմադիր բարբի իւր կամակաւորն է արդէն Երբիւտի, ինչ որ քիչ կարեւորեալ կեանքը կ'ընթացէ:

դաւնագիր (Instrument of Government). Ըստ այս դրութեան՝ բարլամենար պիտի բաղկանար միմիայն մէկ ժողովէ, որ էր պետական ժողովը, և գործադիր պաշտօնեայէ մը կամ նախագահէ մը, որ պիտի կրէր «Անգլիոյ, Սկոթլանդի, Իռլանդի հասարակապետութեան լորտ պաշտպան» տիտղոսը: Վարչական այս դաշնագիրը եղած էր գրաւոր սահմանադրութիւններու ամենաառաջինը, որուն ներքեւ Գրոմվէլ հռչակուեցաւ ցկեանս լորտ պաշտպան: (*)

Ա՛յ Գրոմվէլի իշխանութիւնը անսահման էր, քանի որ բռնակը իր ետեւն էր. իրականին մէջ ան դիկտատոր մը եղած էր: Ուզած ատենը կը կազմէր բարլամենար, (Council of State), ուզած ատենը զայն կը ցրուէր: Ամբողջ հինգ տարի Գրոմվէլ մինակը վարեց երկրին իշխանութիւնը. Թէպէտ իր վարչութիւնը կամայական՝ բայց լուսամբն էր: Իր բուն նպատակն էր Անգլիան մեծութեան արժանաւոր գիրքի մը վրայ դնել: Բայց պէտք է գիտնալ որ նա այդ բանին ձգտեցաւ գլխաւորաբար իրեն առաջնորդ ունենալով Ս. Գրոց պարզ սկզբունքները, և իրեն օժանդակ՝ առաքինի ու կրօնական նախանձախնդրութիւն ունեցող անձնաւորութիւնները, ու այս կերպով նա կարողացաւ օժտել Անգլիան ամենաուժեղ կառավարութեամբ:

Ասկէ զատ Գրոմվէլ աշխատեցաւ պատկառելի դարձնել Անգլիան ամբողջ եւրոպայի մէջ, և ասոր համար նա հալածական բողոքականութեան դատը ստանձնելով, թունդ պաշտպան հանդիսացաւ բոլոր տառապող բողոքականներուն. եւրոպական միջանի իշխաններէ զատ, հարկադրեց նոյնիոկ օրուան Պապը՝ որ վերջ

(*) Մահմուտ Շելվէր փառան է կոչուած Գրոմվէլի գերն ու դիրքը ունենալու, Բանի որ քիչով աւելի զինուորական իշխանութիւնն է Բան քէ ժողովրդապետականը:

այս կրօնական այն հալածանքներուն, որոնց միակ աղբիւրը ինք պիտի ճանչնայ այսուհետեւ, ու եթէ տակաւին շարունակուին, «Սուրբ Անճելօ Անգղիական զէնքերու շառաշիւններուն արձագանգը պիտի լսէ դղրդողին»:

Օլիվըր Գրոմվելը երկաթէ կամքի ու անյողդողդ նկարագրի տէր մարդ մ'ըլլալով հանդերձ, իրեն խիստ ծանր կրճնէր կառավարութեան յաճը, և անտանելի կուգար իր գրաւած դիրքը: Ինք կ'զգար թէ ունի տկար կողմեր: Երովհետեւ իր նախկին փափաքն էր հաստատել սամա-նողրական կառավարութիւն մը, մինչդեռ այժմ ինք դարձած էր զինուորական բռնապետ մը, որուն տիպոսը պարզապէս սուրին տիպոսն էր եղած, և իր իշխանութիւնը որքան ստեղծ ու անտանելի էր ժողովուրդին համար, նոյնքան և աւելի ստեղծ էր եղած իրեն համար: Նա ապրեցաւ, բայց ապրեցաւ չարունակ դաշտին անին ներքեւ: Նա վստահ էր թէ իրմէ ետք Անգլիան ինչ սոսկալի վտանգներու պիտի ենթարկուէր: Նա համոզուած էր այլևս թէ զինուորական բռնակալութեամբ երկիր մը չի կառավարուիր, և թէ այլ օրինակ դրութեան մը առջև կը ստիպուէ անաւոր անկում մը: Գրոմվել այս տաքնադայից կայսրութեան, իր այս մաշկեղնով մատանջութիւններուն միջև, ստատիկ տենդի բռնուելով՝ կնքեց իր մահկանայունը:

Գրոմվելի մահուամբ, ինկաւ նաեւ իր վարչութիւնը, իր ինստիտուցիաները (The protectorate): Իր անարժան որդին

ու յաջորդը՝ Րիչըրտ Գրոմվելը երկուսու ապրիկար մէկը ըլլալով՝ տեղի առաւ ժամանակի բնական շոտանքին, և քանի մը ամիս կառավարելէ վերջ՝ նրաժառանգաւ իր պաշտօնէն, ասպարէզը թողլով միապետականներուն: Այն երկարատեւ բարրամիտոր զոր Գրոմվելը յաճած էր, այժմ Վերտաին հաւաքուեցաւ: Բրոյտի արտաքսոտ անդամներովը միասին, և յայտարարեց որ, «Այս թագաւորութեան վաղեմի հաստատուած օրէնքներուն համաձայն՝ կառավարութիւնը պէտք է բաղկանայ թագաւորէն, Լորտերէն ու հասարակաց ժողովէն»:

Այս բարրամիտը հրաւէր զրկեց Սգուարդեան Կարօլա իշխանին, որ զայ իր ժողովուրդին, և իր նախահայրերուն գահը ժառանգէ: Յնձութեան խոշոր ցոյցերու մէջ Կարօլա իր ոտքը դրաւ այն կղզիին վրայ, ուրկէ 9 տարիներ աքսոր մնացած էր: Կարօլա ժողովուրդին կողմէ գտած արտասովոր ընդունելութիւնէն ու համակրածնքէն ազդուելով, բացազանջեց, «Ստուգիւ յանդանքը իմն է եղած, որ ես մինչև հիմա հեռու մնացած եմ այն հայրենիքէն՝ որ զիս այնքան խանդավառօրէն կ'ընդունի իր մէջ»:

Ահա այս պարագաներուն մէջ Անգղիական Հանրապետութիւնը տապալուելով դարձեալ անոր կը յաջորդէ Սգուարդեն, իւր բռնապետութիւնը: Յեղափոխութիւնի սակայն չէր կրնար տապալուել, ան իր գործը պիտի շարունակէր, քանի որ դեռ չէր լրացուցած իր պատմական առաքելութիւնը:

(Հարունակելի)

ԹԱԴԵՈՍ ԺԱՄԿՈՅԵԱՆ

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ՔԱՆԱՔԱԿՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Յառաջդիմութեան և զարգացումի տեսքը, անցեղայն կապերէն ազատուելու մարմնը, ներկային չինիչ և կենսունակ սկզբունքներով բարձրանալու, և ճշմա-

րիտին, բարիին, գեղեցիկին ու օգտակարին արժէքը հասկնալու սէրը, և վսեմ իտէալի մը և կենդանի յոյսի մը հասնելու փափաքը՝ ընդածին և բնական յատ-

կանխններն են որ մարդը գերազանցապէս վեր կը դասեն անասնական աշխարհէն: Իրենքն ու իրականութիւնները, դէպքերն ու դէմքերը իրարմէ զանազանելու, բանի մը էութեան թափանցելու, եղելութեան պատճառն ու արդիւնքը ըմբռնելու կարողութիւնը մարդկային է և ոչ անասնական: Իմացական և մտաւոր կարողութիւններով օժտուած մարդը իր հոգեկան ու քարոյական ընազդներու, անհուն և անսահման ակեղերք մըն է որուն գաղտնիքներուն թափանցելու և որուն յաւիտենական առեղծուածները մեկնելու համար իմաստատէրին միտքը, բանաստեղծին գրիչը և երգչին յնարը, պատմութեան նախօրեակէն անտի, անդուշ և անդադար երազած, երկնած ու երգած են: Ներկայիս փառաւոր քաղաքակրթութիւնը, գիտութեանց, արուեստից, գեղարուեստից, իմաստասիրութեան յառաջիմութիւնը լոկ ծնունդ են մարդկային մտքի ստեղծագործող ոյժին: Կատմութիւնն ալ իր զանազան և բազմապիսի երեւոյթներովն ու փուլերովը, արտադրութիւն է մարդկային մտքին՝ որ քննելու, քննադատելու, վերլուծելու և ճշմարտութիւնը լոյս երևան բերելու իր ընտիր ձիրքերովը կը յաւակնի աստուածներուն ալ նախանձը չարժել: Արդ մարդկային մտքի ազատ թռիչքը և քաղաքակրթութեան յառաջխաղացումը համընթաց կը թալկն: Կապէ՛ և կաշկանդէ՛ միտքը, և ահա կը կասի քաղաքակրթութեան և զարգացումի անխոր: Քննադատութիւնը թանուշն է ստոյգ յառաջդիմութեան, ճշմարիտ բարձրացումի և լուսաւոր քաղաքակրթութեան:

Ով որ կը յանգանի զրկել մարդը իր քննելու և քննադատելու ձիրքերէն, կը յաւակնի նաեւ ուղաննել անոր անհատականութիւնը և կողոպտել զայն իր գերընտիր յատկանշականէն: Այն ազգերը որ ոգի ի բոլին ջանացած են արմատա-

խիլ ընել սոյն յատկութիւնը, յետադէմ մոլեռանդ, տգէտ և ապիկար գնաւած են իրենց յառաջդիմութեան ճամբուն վըրայ: Իսկ այն ազգերը որ գնահատած և ազատ տապարէզ տուած են անոր՝ մեծցած, բարձրացած, զարայած, լուսաւորուած, և մեծագոյն ծառայութիւն մատուցած են քաղաքակրթութեան և աշխարհի յառաջդիմութեան հզօր թափին: Քննադատութիւնն է միակ մըջոյր ընկերութիւնը փրկելու, անաւոր աշխուշանելու, իմաստասիրական դրութիւնները փոխելու, գիտութեան նոր և ճշմարիտ ուղղութիւն տալու, անյոյս ու խաւարոյին քառնէն նոր և լուսաւոր տիեզերք մը երևան բերելու: «Մեր դարը» կ'ըսէ Քանթ «քննադատութեան դար մըն է, ամէն ինչ պէտք է որ այդ լույլէն անցնի, զտուի, մաքրուի, և զուրս գայ իրր զուտ սովի ծառայե ու մարդկային բարեկեցութեան և աշխարհի յառաջդիմութեան, կրնաք և օրէնք, իրենց բարձր գիրքին յենած, կը մերժեն քննադատութեան անցնելու և ուստի իրենց արեւքը կը կորսնցնեն և թշնամիներու ստուար բանակ մը կ'ստեղծեն իրենց համար»: Լուսաւորուած և կիրթ ազգերը վաղուց ի վեր թողած են այն գաղափարը թէ քննադատութիւնը կը քանդէ. մէջ, քննադատութիւնը ոչ կը քանդէ և ոչ կ'ուրէ. այլ՝ կը շինէ: Քննադատութիւնը թոյն չէ, ան դեղթափ է: Քննադատութիւնը՝ ժողովուրդներու վերածնութեան արտոյտն և թշնամի չէ, ան միակ ճշմարիտ ռանձիրան է իրական յառաջդիմութեան և չափանիշը բարձրագոյն բարիին:

Տէքարթ, Քանթ, Հեկէլ իմաստասիրութեան աշխարհին մէջ. Գոփերնիկոս, Քէրլըր և Հէրշըլ՝ գիտական աշխարհին մէջ, իրենց լայն և բեղուն մտքի արգասիքներովը քննադատութեան ջատագովներ հանդիսացած են, որոնց փիլիսոփայութեան և գիտական աշխարհին մատու-

ցած ծառայութիւնները անուրանալի և անժխտելի են: Եթէ ժամանակի հոլովոյթին համեմատ, յառաջդիմութիւն փոփոխութիւն կը նշանակէ, չկայ, եղած չէ և բնաւ չպիտի ըլլայ օգտակար փոփոխութիւն մը առանց քննադատութեան:

Պատմա-իմաստասիրական ճշմարտութիւն մըն է թէ, ընկերութիւնը կը բարեկարգուի, անհատին արժէքը կը հասկըցուի, մարդկային մտաւոր ու իմացական հորիզոնը ծածկող մռայլ և մութ անպերը կը ցրուին, միայն այն ստեղծ, երբ անհատը իր պատասխանատու ազգային ընգհանուր շահին, իւր ուսանն կը ջանայ քննել և ուսումնասիրել անցեալն ու ներկան, դարուն ու ժամանակին պետքերուն համաձայն լուսաւոր շաւղի մը կ'առաջնորդէ զբաղութեան եւ լոյսի կարօտ ժողովուրդը: Քննադատութիւնը քաղաքակրթութեան հզօր ազդակներէն մէկը ըլլալով իր մեծ և կարեւոր դերը խաղցած է թէ՛ իմացական աշխարհը ազատագրելու և թէ՛ ընկերութիւնը իր մեռած ու ընթարմացեալ վիճակէն սթափեցնելու գործին մէջ: ԺԸՐԴ. դարու փոթորիկներու և յղաշարժումներու առեւ, Հիւմ, Սկոլտաշի սկեպտիկը մարդկային ցեղին հանդիպած ամենէն մեծ պատուհասներէն մէկը, մարդկութիւնը անյուսութեան և անհաւատութեան անաւոր չարիքին ենթարկելու իր ջանքին մէջ, զէմ հանդիման կուգայ Քանթի մեծ իմաստասէրին, կը բաղխի անոր տիեզերական բարձր գաղտփարականներուն, և կամայ ուկամայ տեղի կուտայ մարդկային միտքը ազատագրող քննադատ իմաստասէրին, մարդկութիւնը լայն շունջ մը տուաւ այն՝ երբ ինքզինքը յաւիտենական կործանումէն ազատուած զգաց: Ազգերու և ժողովուրդներու ճակատագիրը իրենց ձեռքը ունեցող մեծ միտքերը և նշանաւոր դէմքերը, այսօր կը խոնարհին և կը յարգեն Քանթի յիշատակը, զի Ան

իր խորաթափանց մտքովը ջանաց մարդկութիւնը այս փոփոխուէզ ուղիանի վրայէն յաւետ երանելի հանգրուանը առաջնորդել: Ան ոգի իբրին ջանաց հիմնադրուակ կործանել Հիւմի փիլիսոփայական դրութիւնը, դրութիւն մը որ մարդկութիւնը տարտարոս մը կ'առաջնորդէ. ուր ո՛չ յուսոյ նշոյց մը և ո՛չ լուսոյ շող մը կ'առկայծի:

